ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԱՍՏՂԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 14-Ա

09/06/2020

05-013-0301-0052 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ
ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ
ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի , ՏԻՄ-ի մասին ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի և ՀՀ կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշման պահանջներով և հաշվի առնելով տվյալ տարածքի նախկին ենթավարձակալության պայմանները.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Աստղաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող Օստներ փողոց 12 հասցեում գտնվող 05-013-0301-0052 կադաստրային ծածկագրով էներգետիկայի , տրանսպորտի , կապի , կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության , կապի գործառնական նշանակության 0.02 հա մակերեսով հողամասը առանց մրցույթի 99 տարի ժամկետով , ամսական 40.0 հազ. դրամ վարձավճարի գումարով վարձակալության իրավունքով տրամադրել ,,ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ,, ՓԲԸ (նախկին ,,Ղ-ՏԵԼԵԿՈՄ,, ՓԲԸ) կազմակերպությանը տվյալ տարածքում տեղադրված կապի կայանի զբաղեցրած և սպասարկման համար:
2. Առաջարկել համայնքի ղեկավարին սահմանված կարգով կնքել հողամասի վարձակալության պայմանագիրը:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԱՐՇԱԿՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԻԱՎԵՅԱՆ ՍԱՆՎԵԼ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՌԱՖԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՌՈԲԵՐՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ**